ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Որոշ կանոնագրութեան և ծրագրի անհրաժեշտութիւնը և Հայոց Թեմ. Հ. դպրանոցների վարչական և ուսումնական կարգ ու կանոնի՝ գիմցիպլինայի միակերպութեան գաղափարը — Բժ Ս. Շահնազարեանց. Մոսկուա 1900 գինը 1 բուբլի.

—Տեղեկութիւններ Եւրոպայի Հայ ուսանողական միութեան 18⁹⁷/₉₈. 18⁹⁸/₉₉ թ. Վիեննա, 1899.

—Объ Авгарѣ, Царѣ Едесскомъ, по Моисею Хоренскому.—Гр. Халатьянцъ (*Извлеченіе* изъ приготовляемаго къ печатанью изслѣдованія: „Армянскіе Аршакиды въ исторіи Арменіи Моисея Хоренскаго. Опытъ критики источниковъ*). —Պրոֆ. Գ. Խալաթեանի այս փոքրիկ ուսումնասիրութիւնը հանուած է Լազարեան Ճեմարանի վերատեսուչ Պրոֆ. Միլլէրի անուան նուիրած ժողովածուից և ամփոփելով համառօտակի այն եզրակացութիւնները, որոնց յանգել են Արգար թագաւորի քրիստոնէութիւն ընդունելու պատմութիւնը քննադատող նշանաւոր գիտնականները՝ մի քանի դիտողութիւններ է անում յատկապէս այդ նիւթի Խորենացու պատմութեան մէջ կրած փոփոխութիւնների նկատմամբ. Զարմանում ենք սակայն, թէ ինչո՞ւ հարևանցի կերպով միայն յիշում է Կարրիէր, որ այդ նիւթը մշակել է գրեթէ նոյն տեսակէտներով և նոյն նպատակով. Ի դէպ՝ թողլ տուրի մեզ ևս մի դիտողութիւն անել. մեզ թուում է, թէ Արգարի որդու Խորենացու պատմութեան մէջ Անանուն կոչուելու պատճառը պէտք չէ շատ հեռու փնտռել. այդպէս է կոչուում երևի նա պարզ այն պատճառաւ, որ աղբիւրի մէջ նորա անունն ամենևին չկայ յիշուած։

—Армянскій апокрифъ, Посланіе судьи Пилата къ Тиверію Кесарю по роспятіи на крестѣ Господа Бога нашего (по рукописи XVII вѣка). —Х. И. Кучукъ—Іоаннесовъ. Москва, 1900. — Այս հատիւ 3 էջ պարունակող գրուածքը, որի արտաքին տեսքը սակայն շատ պատկառելի է՝ հանուած է նոյնպէս վերոյիշեալ ժողովածուից, նոր Կտակարանի վաղուց ծանօթ անվաւեր գրութիւններից մէկի ռուսերէն թարգմանութիւնն է այդ։ Թարգմանիչը վերջում մի փոքրիկ ծանօթութիւն աւելացնելով «Բրև եզրակացութիւն» ասում է, մեզ մնում է աւելացնել, որ մեր (Խերսոնեան Նահանգի Գրիգորիոպոլիս քաղաքում) գտած (!) այս յիշատակարանի ռուսերէն թարգմանութիւնը առաջին անգամն է լոյս տեսնում, իսկ հայկական բնագիրը, որ մեր մատենադարանի սեփականութիւնն է, դեռ մինչև այժմ չէ հրատարակուած։ — Մարդ ապշում է, Լազարեան Ճեմարանի հայերէն դպրութեանց ուսուցիչն ինչպէ՞ս կարող էր չիմանալ, որ այդ յիշատակարանը մի երկու անգամ հրատարակուելուց յետոյ՝ լոյս է տեսել երկու տարի առաջ այնպիսի մի յայտնի ժողովածուի մէջ, որպիսին է Վենետիկի Մխիթարեանց հրատարակած՝ «Անվաւեր գիրք Նոր Կտակարանաց*».

—Die Inschrift I von Ierabis.—P. Jensen.—Պրոֆ. Յենսէնի այս նոր ուսումնասիրութիւնը, որ Մեծ. Հեղինակը ուղարկել է մեզ առանց յիշելու, թէ ի՞նչ ամսագրի ո՞ր համարից է առնուած՝ վերծանութիւնն է Հիթիտների կամ Հաթերի (Հին Կտակարանի Քետացւոց) մի արձանագրութեան և իւր մանրակրկիտ ծանօթութիւններով նոր լոյս է սփռում և նոր բաներ ու տեղեկութիւններ աւելացնում նոյն հեղինակի արդէն հրատարակած ուսումնասիրութեանց վերայ։ Ինչպէս յայտնի է բազմահմուտ անխոնջ Ուսուցչապետը հաթերին հայոց նախնիք է համարում. այդ տեսութեան ստուգութեան համար նա նոր ապացոյցներ է գտնում ներկայ արձանագրութեան մէջ, որի ընդհանուր արժէքն այսպէս է որոշում իւր գրուածքի վերջում։ Բազմաթիւ նոր աչքի ընկնող պատմական իրողութիւններ չենք գտնում նորա մէջ. բայց և ո՞վ կարող է այդ սպասել, եթէ դիտէ, որ նորա մեծ մասամբ այն ժամանակուանից են, երբ Հիթիտ-Հաթեան պետութիւնները ինքնուրոյն դեր չէին կատարում, և ուրեմն պատերազմական և զինուորական մեծ գործեր չկային պատմելու։ Արձանագրութիւնները մեզ ճիշտ այնչափ են տալիս, որչափ սպասելի էր։ Ամենից առաջ նորա մեզ միջոց են ընծայում աւելի և աւելի պարզ կերպով ճանաչելու, թէ ինչպէս էր Հայոց լեզուն 1000 տարի Քր. առաջ, և աւանդում են զանազան բաներ մի հին հնդկագերմանական ազգի կրօնի մասին։ Բայց և յատկապէս իրենց գոյութեամբը միայն խիստ կարևոր տեղեկութիւններ են տալիս նորա մեզ Հայոց և առհասարակ Հնդկագերմանացւոց ամենահին պատմութեան մասին։ Ամ շատ քիչ է համարում այս՝ նորան դժբաղդաբար աւելի գոհացնել չենք կարող։

Ստացել ենք նաև պ. Բասմաջեանի երկու փոքրիկ ֆրանսերէն յօդուածների արտատպութիւնները, որոնցից մէկը վերծանութիւն է Պօլսում գտնուած մի ռուսերէն արձանագրութեան, միւսը մեր Ճեմարանում գտնուող և Աւարտ 1896, նոյեմբեր՝ տպուած սեպագիր արձանագրութեան. Պ. Բասմաջեան կարգում է վերջինս. «Արգիստէս Մենուասայ կանգնեաց զայս տուն վասն ազգի (իւրոյ)».

Կ. Ղ.

---

* Տես. ի միջի այլոց Բազմավէպ. 1899 մարտ. եր. 132։